

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
վիճակագրության պետական խորհրդի նիստի

04.10.2010թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Վ.Գավթյան, Ա.Աղազարյան, Ա.Շաբոյան (խորհրդի անդամներ)

Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ջ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական), Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Կ.Կույումջյան (մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ), Գ. Հովսեփյան (իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ), Ա. Հարությունյան (առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ):

Օրակարգի նախագծում՝ հինգ հարց.

1. «Տնտեսությունների հաշվառման ձև թիվ 1՝ «Համայնքի գիրք» ձևաթուղթը, Հաշվառման ձև թիվ 2՝ «Գյուղական համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը» ձևաթուղթը, Տնտեսությունների հաշվառման ձև թիվ 3՝ «Այբբենական գիրք» ձևաթուղթը, ինչպես նաև «Գյուղական համայնքներում տնտեսությունների հաշվառման Ձև թիվ 1՝ «Համայնքի գիրքը», Ձև թիվ 2՝ «Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը» և տնտեսությունների հաշվառման Ձև թիվ 3՝ «Այբբենական գիրքը» վարելու վերաբերյալ ցուցումները» հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2007 թվականին իրականացված ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան՝ Իտալիայի Եվրոպական համալսարան ինստիտուտի ժամանակակից ուսուցման Ռոբերտ Շուման կենտրոնի հայցորդ Շուշանիկ Մակարյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/

3. «Առևտրի շրջանառության մասին» Ձև թիվ 1-ԱՌ-ԵՎՏՈՒԲ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ ՎՊԽ 2005թ. նոյեմբերի 7-ի թիվ 21-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, «Ծառայությունների ծավալի մասին» Ձև թիվ 1-ԾԱՌ-ԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ ՎՊԽ 2005թ. նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև թիվ 1-ՏՏ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ ՎՊԽ 2009թ. հոկտեմբերի 27-ի թիվ 33-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ա. Հարությունյան/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.

Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 01–03.09.2010թ. տեղի ունեցած «ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի և ԵՏՀ Բնապահպանական քաղաքականության կոմիտեի ու վիճակագրության բաժնի կողմից համատեղ կազմակերպած Էկոլոգիական ցուցանիշների ներդրմանն ու օգտագործմանը նվիրված Եվրոմիության, Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Միջին Ասիայի երկրների բնապահպանների և վիճակագիրների միասնական նպատակային խմբի խորհրդակցությանը» մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Յու. Պողոսյան/

5. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բվեարկության արդյունքները-կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Տնտեսությունների հաշվառման ձև թիվ 1՝ «Համայնքի գիրք» ձևաթուղթը, Հաշվառման ձև թիվ 2՝ «Գյուղական համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը» ձևաթուղթը, Տնտեսությունների հաշվառման ձև թիվ 3՝ «Այբբենական գիրք» ձևաթուղթը, ինչպես նաև «Գյուղական համայնքներում տնտեսությունների հաշվառման Ձև թիվ 1՝ «Համայնքի գիրքը», Ձև թիվ 2՝ «Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը» և տնտեսությունների հաշվառման Ձև թիվ 3՝ «Այբբենական գիրքը» վարելու վերաբերյալ ցուցումները» հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Կ. Կոյունջյան/

Որոշեցին՝

հաստատել «Տնտեսությունների հաշվառման ձև թիվ 1՝ «Համայնքի գիրք» ձևաթուղթը, Հաշվառման ձև թիվ 2՝ «Գյուղական համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը» ձևաթուղթը, Տնտեսությունների հաշվառման ձև թիվ 3՝ «Այբբենական գիրք» ձևաթուղթը, ինչպես նաև «Գյուղական համայնքներում տնտեսությունների հաշվառման Ձև թիվ 1՝ «Համայնքի գիրքը», Ձև թիվ 2՝ «Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը» և տնտեսությունների հաշվառման Ձև թիվ 3՝ «Այբբենական գիրքը» վարելու վերաբերյալ ցուցումները»:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2007 թվականին իրականացված ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ Իտալիայի Եվրոպական համալսարան ինստիտուտի ժամանակակից ուսուցման Ռոբերտ Շուման կենտրոնի հայցորդ Շուշանիկ Մակարյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Կ. Կոյունջյան/

Որոշեցին՝

թույլատրել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնին՝ Իտալիայի Եվրոպական համալսարան ինստիտուտի ժամանակակից ուսուցման Ռոբերտ Շուման կենտրոնի հայցորդ Շուշանիկ Մակարյանին տրամադրել ՀՀ ԱՎԾ-ի կողմից 2007 թվականին իրականացված ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չիրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2.1. ՀՀ վիճակագրության պետական խորհուրդը որոշեց՝ հանձնարարել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյունջյանին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի հետ համատեղ պատրաստել և ՀՀ ԱՎԾ կայք էջի համապատասխան բաժնում տեղադրել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի կողմից 2007 թվականին իրականացված ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան համացանցից օգտվողների համար առանց սահմանափակման:

3. «Առևտրի շրջանառության մասին» Ձև թիվ 1-ԱՌԵՎՏՈՒԲ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ ՎՊԽ 2005թ. նոյեմբերի 7-ի թիվ 21-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, «Ծառայությունների ծավալի մասին» Ձև թիվ 1-ԾԱՌ-ԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ ՎՊԽ 2005թ. նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև թիվ 1-ՏՏ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ ՎՊԽ 2009թ. հոկտեմբերի 27-ի թիվ 33-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Հարությունյան/

Որոշեցին՝

հաստատել «Առևտրի շրջանառության մասին» Ձև թիվ 1-ԱՌ-ԵՎՏՈՒԲ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը, «Ծառայությունների ծավալի մասին» Ձև թիվ 1-ԾԱՌ-ԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև թիվ 1-ՏՏ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգները, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչել ՀՀ ՎՊԽ 2005թ. նոյեմբերի 7-ի թիվ 21-Ն, 2005թ. նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն և 2009թ. հոկտեմբերի 27-ի թիվ 33-Ն որոշումները:

/Նորմատիվ/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.

Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 01–03.09.2010թ. տեղի ունեցած «ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի և ԵՏՀ Բնապահպանական քաղաքականության կոմիտեի ու վիճակագրության բաժնի կողմից համատեղ կազմակերպած Էկոլոգիական ցուցանիշների ներդրմանն ու օգտագործմանը նվիրված Եվրոմիության, Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Միջին Ասիայի երկրների բնապահպանների և վիճակագիրների միասնական նպատակային խմբի խորհրդակցությանը» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին հաղորդումը ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ